

2019թ-ի մարտի 27-ին և 28-ին ՀՀ Տավուշի և Լոռու մարզպետարաններում տեղի ունեցան հանդիպումներ մարզպետի, մարզպետարանի աշխատակազմի և «Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ աշխատակիցների միջև: Հանդիպման հիմնական նպատակը ՀՀԱԿ ՀԿ կողմից իրականացվող «Բազմաշահագրգիռ սոցիալական պաշտպանություն» ծրագրի շրջանակներում համագործակցության հուշագրի կնքումն էր և հետագա անելիքների շուրջ պայմանավորվածության ձեռքբերումը:

Հանդիպման սկզբում ներկայացվում էին ՀՀԱԿ ՀԿ գործունեության շրջանակները, այնուհետև քննարկում ծավալվում էր «Բազմաշահագրգիռ սոցիալական պաշտպանություն» ծրագրի մանրամասների շուրջ: Հանդիպումների արդյունքում համագործակցության հուշագրեր կնքվեցին մարտի 27-ին Տավուշի, իսկ մարտի 28-ին Լոռու մարզպետների հետ:

«Օրագրի նպատակն է նպաստել ՀՀ-ում կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների և ընտանիքների սոցիալական խնդիրների վերհանման և դրանց լուծմանն ուղղված մեխանիզմների բարելավմանը, մշակելով բարելավման առաջարկություններ: Ծրագրի իրականացման աշխարհագրությունն է ՀՀ Լոռու (Ալավերդի), Տավուշի (Դիլիջան), Չեղարքունիքի (Սևան) և Կոտայքի (Հրազդան) մարզերը:

«Բազմաշահագրգիռ սոցիալական պաշտպանություն» ծրագիրն իրականացվում է «Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ-ի կողմից «Իրավաբանների հայկական ասոցացիա» ՀԿ ղեկավարությամբ կոնսորցիումով գործարկվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում:

«Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից:

